## ՇՆՈՐՀԱՒՈՐ

ԵՒ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

---

Արշալոյս ներկայ (Յունվար ամսոյ) թուով ողջունելով 1877 թուականը՝ ինչպէս նաև ամսագրոյս Ժ. րդ. շրջանի Առաջին թիւը ի լոյս տալով՝ նախ քաղցր պարտք կըզգայ շնորհաւորել սիրելի համազգայնոց նոր տարի, բարեմաղթելով՝ զի շնորհիւ և ողորմութեամբ Տեառն՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բազում բարեմասնութեամբք զարդարուած՝ արժանի լինին շատ տարիներու հասանել խաղաղութեամբ և խնդութեամբ։

Գալով երկրորդ հարկին, կյայտարարէ՝ զի բաց ի ձեւական թեթև փոփոխութենէ՝ ներկայ շրջանի մէջ անփոփոխ կպահէ իւր շարունակած ծրագիրը, դրութիւնը և այլ ամեն պայմանները.— իսկ ի յառաջակայ 1878 թուականէն սկսեալ՝ Աստուծով պիտի յաջողի կարէ մեծ փոփոխութեանց ենթարկուած ի հանդէս փութալ և աւելի ընդարձակ կերպով պիտի կատարէ իւր պարտաւորութիւնքը ի գոհութիւն ամենեցուն։

Արդարեւ կյուսայ նաև, զի իր բարեսէր Գործակալք մի և նոյն սիրով և արդիւնաւորութեամբ պիտի յարատեւեն բաժանորդագրել մերազնեայքը՝ լծորդ պարտաւորութիւնքը ևս կատարելով, և միշտ բարեջան աջակիցներ պիտի հանդիսանան սորին Խմբագրութեան՝ ինչպէս ցարդ եղած են և Խմբագրութեան գոհունակութեան արժանացած: Նոյնպէս բարեսէր մերազնեայք յաճախելով ի բաժանորդագրութիւն՝ միշտ պիտի հաճին պատուել զսա՝ ինչպէս ցարդ փորձով ապացուցուած, և Խմբագրութիւնը հրապարակաւ շնորհակալութիւն յայտնած է: